ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օհանյան

Սույն թվականի սեպտեմբերի 5-ին մեր կազմակերպություն է դիմել փախստական Ակոպովա Զինաիդան (բնակվող՝ Երևան, Թբիլիսյան խճուղի, 5-րդ շենք, հ. 213 բնակարան, հեռ. 094/335098) իրավական օգնություն ստանալու ակնկալիքով:

Համաձայն քաղաքացի Ակոպովայի դիմումի՝ դեռևս 2016թ. հուլիսի 27-ին նա գրավոր դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ իր հարևաններ Ռոբերտ և Սուրեն Ալեքսանդրի Աղասյաններ եղբայրների մասին, ըստ որի նրանք երկկողմանի ծնողազուրկ են և ներկայումս գտնվում են պարտադիր զինվորական ծառայության մեջ: Ավագ եղբայրը՝ Ռոբերտ Ալեքսանդրի Աղասյանը (ծնվ.11.02.1997թ.), ծառայում է Հայաստանի Հանրապետության, Վանաձոր քաղաքում տեղակայված հ. 63853 զորամասում, իսկ կրտսեր եղբայրը՝ Սուրեն Ալեքսանդրի Աղասյանը (ծնվ. 04.06.1998թ.), ծառայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի 1-ին պաշտպանության զորամասում:

Դիմումատու Զ. Ակոպովան իր դիմումով ՀՀ պաշտպանության նախարարին խնդրել է, որպեսզի հնարավորություն տրվի Աղասյան եղբայրներին միևնույն զորամասում կամ միմյանց մոտ գտնվող զորամասերում ծառայելու, քանի որ նրանք երկկողմանի ծնողազուրկ են, իսկ ավագ եղբայրը՝ Ռոբերտ Աղասյանը, հանդիսանում է իր կրտսեր եղբոր՝ Սուրեն Աղասյանի միակ խնամակալը (համապատասխան փաստաթուղթը գտնվում է Ռ. Աղասյանի մոտ), որը հնարավորություն կտա եղբայրներին զինվորական ծառայության ընթացքում միմյանց տեսակցելու, քանի որ բացի միմյանցից որևէ հարազատ կամ բարեկամ չունեն:

Հետևաբար, հիմք ընդունելով դիմումատու Զ. Ակոպովայի դիմում-խնդրանքը, ինչպես նաև հաշվի առնելով Աղասյան եղբայրների խոցելի վիճակը խնդրում եմ Ձեզ անհապաղ քննարկման առարկա դարձնել հարազատ եղբայրներ Աղասյաններին միևնույն և նրանց բնակության վայրից (Երևան, Թբիլիսյան խճուղի, 5-րդ շենք) 150 կմ հեռավորության վրա գտնվող զորամասերից մեկում միասին ծառայելու հարցը:

Հարկ է նկատել, որ ժամանակին Աղասյան եղբայրներից յուրաքանչյուրին զորակոչի ենթարկելիս չեն կիրառել §Զինապարտության մասին¦ ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի

պահանջներից որևէ մեկը: Ըստ իս, Աղայան եղբայրները լիովին իրավունք ունեին օգտվել օրենքով իրենց տրված արտոնություններից:

Այսպիսով, ակնկալում եմ Ձեր գործուն միջամտությունն ու աջակցությունը սույն խնդրի անհապաղ լուծման գործընթացում:

Արդյունքների մասին խնդրում եմ հայտնել մեր կազմակերպությանը:

Կից ներկայացվում են՝

1. Ակոպովայի անձը հաստատող փաստաթղթի,
2. Ակոպովայի դիմումը ՀՀ ՊՆ ներկայացված փոստի անդդորագրի պատճենները:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Գործադիր տնօրեն